# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 957-Ա «07» օգոստոսի 2025թ.

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 146-րդ կետի պահանջները՝ Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի գեղարվեստական լուսավորության արդիականացման աշխատանքները շահագործման ընդունելու նպատակով.

1. Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Ա. Խեչիկյան | - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերի ղեկավար /հանձնաժողովի նախագահ/ |
| Կ. Մալոյան | - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ |
| «ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Ավետիսյան | - Կապալառու |
| «Թ.Ա.Հ.Գ.ԳՐԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Գրիգորյան | - Տեխնիկական հսկողություն իրականացնող |
| «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ի տնօրեն Է. Մարտիրոսյան | - Հեղինակային հսկողություն իրականացնող |
| «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ-ի գեղարվեստական լուսավորության, այգիների, անցումների, տեղամասի պետ Հ.Գալուստյան | - Շահագործող կազմակերպություն |

2. Հանձնաժողովին՝ ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին և կազմել աշխատանքների հանձնման-ընդունման ակտը:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒ ԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246